

Մրցույթ՝ << Սյունիքի մարզի «Տորունիքի հիմնական դպրոց » ՊՈՎԿ-ի հայոց լեզու, գրականություն (6 դասաժամ), ռուսաց լեզու (5 դասաժամ), անգլերեն (2 դասաժամ), կերպարվեստ (0,5 դասաժամ),աշխարհագրություն (1,5 դասաժամ),ինֆորմատիկա (1 դասաժամ),ֆիզիկա (2 դասաժամ),քիմիա (2 դասաժամ),կենսաբանություն (2 դասաժամ),Ֆիզկուլտուրա (3 դասաժամ), դասվար (20 դասաժամ) ուսուցչի թափուր տեղերի համար

Մրցույթն անցկացվում է երկու փուլով՝ թեստավորման և հարցազրույցի: Թեստավորման փուլն անցկացվում է՝ ըստ << ԿԳՄՍՆ մշակած հարցաշարի: Հարցազրույցի փուլի հարցաշարը կազմում է հաստատությունը և յուրաքանչյուր մասնակցի հետ հարցազրույցն անցկացնում առանձին:

Մրցույթին մասնակցելու համար պետք է ներկայացնել՝

- դիմում (ձև 1),
- 1 լուսանկար 3x4 չափի,
- բարձրագույն կրթությունը հաստատող փաստաթուղթ (դիպլոմ),
- անձը հաստատող փաստաթուղթը,
- «Հանրակրթության մասին» << օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան՝ աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք աշխատավայրից և աշխատանքային գրքույկի պատճեններ (առկայության դեպքում),
- ինքնակենսազրություն (ձև 5),
- այլ պետությունների քաղաքացիները՝ <<-ում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթը,
- << արական սեռի քաղաքացիները՝ նաև զինվորական գրքույկ,
- հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր (առկայության դեպքում),
- որակավորման տարակարգ ունենալու դեպքում՝ հավաստող փաստաթուղթ:

Տնօրենի կողմից նշանակված պատասխանատու անձը փաստաթղթերի բնօրինակները համեմատում է պատճենների հետ և բնօրինակները վերադարձնում: Եթե ներկայացված փաստաթղթերի ցանկն ամբողջական չէ կամ առկա են թերություններ, մասնակիցը կարող է մինչև փաստաթղթերի ընդունման ժամկետի ավարտը վերացնել և համարել դրանք:

Փաստաթղթերն ընդունվում են հունվարի 23-ից մինչև փետրվարի 3-ը ներառյալ, ամեն օր՝ ժամը 10^{00} -ից 15^{00} -ը, բացի շաբաթ, կիրակի և ոչ աշխատանքային այլ օրերից:

Մրցույթը տեղի կունենա **2023 թ. Փետրվարի 9-ին՝ Ժամը 15⁰⁰-ին**, Տորունիքի հիմնական դպրոցում, հասցե՝ գ. Տորունիք 6 փ., շ 6: Տեղեկությունների համար զանգահարել 093811210 հեռախոսահամարով: